Է .

Ով որ սիրոյ տէր մանկան չողորմի, ինքըն մեռանի՛,
Իր մահն ի մորին լինի ’ւ իր բերնին հաղորդ չի գտուի՛.
Օձերն ալ թաւութ կապեն, խատ գորտերն ի սարկաւագնի,
Ագռաւն ալ երէց լինի, սեւ ճայեկն իւր հաբեղանի:

Ը .

Կանչեմ, ալանի կանչեմ ուր որ իմ ձայնըն հասանի.
Թող աւազանի ծընունդ մարդ սիրուն պէլան չընկընի.
Սէրն ալ գէմ ոտուի ունի ու ձեռուի՝ զէտ էտ հարամի.
Եկէք հարամին տեսէք, հարամին որ նետ մի չունի,
Անդուր ’ւ անըսպառ եկեալ անգըրօղ հոգիս կու տանի,
Եկեր ի գըլուխս ելեր՝ երեսօքս ի քարշ կու տանի:

Թ .

Եկին ու բերին խապար, թող լեզուն չորնայ բերողին:
Քո եարն ի Պուռսայ քաղաք նայ տեսաք ի մէջ շուկային.
Ձեռկունքն է դալալ տըւել ու նստել առջեւ գընողին.
Գընո՛ղ, գընէ՛, մի՛ վախել. վա՛յ հազար իմ կորսընողին:

ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա .

Գընա՛, իմ հոգոյս հոգի, իմ սըրտէ սիրած սիրելի,
Գընա՛, իմ աչացըս լոյս, որ անէծքս ի քեզ չիբանի:

Բ .

Ձիմ եարն ի գընալ տեսայ, կանչեցի՝ «Իմ կարմի՛ր երես».
Դարձաւ ու ճաւապ ետուր, թէ՝ «Քանի՛ ապլաի զըրուցես.
Ստեղծօղն ինձ երես տըւեր, քեզ աչեր, դու կանգնի՛ր ու տե՛ս:
–Ձդարտակ տեսնելն ի՞նչ անեմ, երբ ծոցուդ մահրում կու հանես.
Հանց որ մահրում կու հանես, բե՛ր պատանքն ու դիր զիս ի ներս:
–Հեռի՛ պատանքն ի քենէ, բանամ զծոցս, արե՛կ մո՛ւտ ի ներս:
–Աստուած ողորմի՛ քո հօրն, ի՞նչ աղէկ թապտիր մի կ’անես:
Կուտաս ինձ շունչ ու հոգի, մահուանէ ի կեանս կու փոխես: